# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Կարգավիճակ | Առաջարկության բովանդակությունը | Կցված փաստաթղթեր | Եզրակացություն | Դրույթ |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Կարեն Աբրահամյան<br>04.02.2026 15:28:43 | | 1. Ի՞նչ կարգավորումներ են գործելու անապահովության նպաստի վճարման դեպքում, ապրիլի մեկից բացառապես անկանխիկ եղանակով է վճարվելու՝ նաև անապահովության(ընտանեկան, սոցիալական) նպաստը:<br>2. Եթե անձը միևնույն ժամանակ հանդիսանում է և' նպաստառու (անապահովության), և' | | **1. Առաջարկն ընդունվել է ի գիտություն:**<br>Ներկայացվող նախագծով անապահովության նպաստը, ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը և հրատապ օգնությունը 01.04.2026 թվականից | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կենսաթոշակառու, հնարավո՞ր է դիմում լրացնել և նույն բանկը ընտրելու դեպքում նպաստը փոխանցվի արդեն գործող կենսաթոշակի քարտին: | | վճարելու է բացառապես անկանխիկ եղանակով:<br><br>**2. Առաջարկն ընդունվել է ի գիտություն:**<br>ՀՀ կառավարության 30.01.2014 թվականի N 145-Ն որոշման շրջանակում գործող ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազան բաղկացած է կենտրոնական տեղեկատվական բազայից և դրա բաղկացուցիչ մասերից՝ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | միասնական սոցիալական ծառայության 49 տարածքային կենտրոնում ձևավորված տեղական տեղեկատվական բազաներից և գործում է լոկալ տիրույթում, որի պատճառով ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը և հրատապ օգնությունը վճարող կազմակերպության, օնլայն տարբերակով, փոփոխություն կատարելն անհրատեսական է:<br>Միաժամանակ, ՀՀ կառավարության | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ 2025 թվականի մարտի 17-ից ՀՀ Կոտայքի և Սյունիքի մարզերում ներդրվել է անապահովության գնահատման նոր համակարգը, որը 2026 թվականի հուլիսի 1-ից կներդրվի ամբողջ հանրապետությունում:<br><br>Գնահատման նոր համակարգով՝ սկսած դիմումների ներկայացումից, անապահովության գնահատման ամբողջ գործընթացը (այդ թվում նաև վճարող կազմակերպության փոփոխությունը) | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | թվայնացված է, որն իրականացվում է սոցիալական պաշտպանության ոլորտի դիմումների միասնական համակարգում ստեղծվող անհատական օգտահաշվի միջոցով՝ առցանց տիրույթում: | |
| 2 | Կարեն Աբրահամյան<br>22.01.2026<br>10:42:57 | | Միասնական սոցիալական ծառայության կայքի միջոցով հնարավոր է փոխել վճարող կազմակերպությունը Հայփոստից բանկ կամ բանկից բանկ բոլոր տիպի նպաստների ու թոշակի դեպքում,բացի անապահովության նպաստից,առաջարկում եմ նաև անապահովության նպաստը վճարող կազմակերպության փոփոխության | | **Առաջարկն ընդունվել է ի գիտություն:**<br>ՀՀ կառավարության 30.01.2014 թվականի N 145-Ն որոշման շրջանակներում գործող ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | հնարավորություն լինի օնլայն տարբերակով: | | բազան բաղկացած է կենտրոնական տեղեկատվական բազայից և դրա բաղկացուցիչ մասերից՝ միասնական սոցիալական ծառայության 49 տարածքային կենտրոններում ձևավորված տեղական տեղեկատվական բազաներից և գործում է լոկալ տիրույթում, որի պատճառով ընտանեկան նպաստը, սոցիալական նպաստը և հրատապ օգնությունը վճարող կազմակերպության, օնլայն տարբերակով, | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | փոփոխություն կատարելն անհրաժեշտ է:<br><br>Միաժամանակ, ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ 2025 թվականի մարտի 17-ից ՀՀ Կոտայքի և Սյունիքի մարզերում ներդրվել է անապահովության գնահատման նոր համակարգը, որը 2026 թվականի հուլիսի 1-ից կներդրվի ամբողջ հանրապետությունում:<br><br>Գնահատման նոր համակարգով՝ սկսած դիմումների ներկայացումից, անապահովության գնահատման | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ամբողջ գործընթացը (այդ թվում նաև վճարող կազմակերպության փոփոխությունը) թվայնացված է, որն իրականացվում է սոցիալական պաշտպանության ոլորտի դիմումների միասնական համակարգում ստեղծվող անհատական օգտահաշվի միջոցով՝ առցանց տիրույթում: | |